Արձանագրություն N 2

«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 հունիսի 2026թ.

ժամը 11:30

Մասնակցում էին
հանձնաժողովի

| | |
|---|---|
| Նախագահ՝ | Ալմաստ Հարոյան |
| Անդամներ՝ | Սվետլանա Գրիգորյան, Լիլիթ Սարգսյան |
| Քարտուղար՝ | Վարդան Հովհաննիսյան |

1. **Հրավերի վերաբերյալ հարցումների և տրված պարզաբանումների վերաբերյալ**
**ա/** գնման առարկայի տեխնիկական բնութագրի մասով հարցումներ չեն ստացվել,
**բ/** հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-03» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.06.2026թ. ժամը 11:30-ին փակվել է հայտերի գրանցամատյանը և հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

2.1 **Հայտեր ներկայացրած մասնակիցները՝**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի տվյալները |
|---|---|---|
| 1. | «Բիզմա» ՍՊԸ | Լատվիյա, ք.Ռիգա, Սկոլաս 21, հեռ. +371 22 831 080, info@bizma.lv |

2.2 **Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**
Մասնակիցի կողմից ներկայացված ծրարը կազմված է **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-03»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.3 **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
**«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-03»** ծածկագրով բաց մրցույթի մասնակցի փակ ստորագրված և կնքված ծրարներով ներկայացրել են.

- ✓ Դիմում հայտարարություն գնման ընթացակարգին մասնակցելու (Հավելված 1)
- ✓ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 1.1)
- ✓ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր (Հավելված 1.2)
- ✓ գնային առաջարկ (Հավելված 2)
- ✓ հայտի ապահովում:

Վերոնշյալ ընկերության կողմից ներկայացված փասթաթղթերը կազմվել են բնօրինակից և պատճենից, փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

2.4 **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-03»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.5 **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/**
Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.
Բացման նիստի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքը հետևյալն է՝ **1 EUR - 428.71** դրամ:

***Չափաբաժին 1՝*** Ջրծաղիկի դեմ պատվաստանյութ /երեխաների և մեծահասակների համար/՝ 30 000 դեղաչափ:

| **հ/հ** | **Մասնակցի անվանումը** | **Գնման գինը՝ 685 000 000,0 ՀՀ դրամ** | | |
|---|---|---|---|---|
| | | **Մասնակիցների կողմից առաջարկված գները՝** | | |
| | | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| 1 | «Բիզմա» ՍՊԸ | 615 600 եվրո<br>**263 913 876** դրամ | - | 615 600 եվրո<br>**263 913 876** դրամ |

3. **Հայտերի գնահատման վերաբերյալ.**
ա/ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Բիզմա» ՍՊԸ հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները
4. **Հանձնաժողովը որոշեց.**
**ա/** «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-03» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Բիզմա» ՍՊԸ-ին:
**բ/** Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Բիզմա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 3 Դեմ՝ 0

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները**

Հանձնաժողովի Նախագահ՝ ________ Ալմաստ Հարոյան

Անդամներ՝ ________ Սվետլանա Գրիգորյան

________ Լիլիթ Սարգսյան

Քարտուղար՝ ________ Վարդան Հովհաննիսյան